


КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Ահմադ ալ-Բունիի «Շամս ալ-մաարիֆ» գրքից հնայախոսությունների և աղոթքների օգտագործումը ժամանակակից արաբական հասարակություններում (արաբալեզու համացանցի նյութերի հիման վրա)

Անտոնյան Աննա Ի.

Ասպիրանտ «Ազգագրություն» մասնագիտությամբ, Արևելագիտության ինստիտուտ, Հայ-ռուսական համալսարան (Երևան, ՀՀ)
 <https://orcid.org/0009-0001-6715-9492>
antonyananna235@gmail.com

ՀՏԳ՝ 28-72; EDN: IKFTEE

DOI: 10.58587/18292437-2025.1-109

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ահմադ ալ-Բունի, «Շամս ալ-մաարիֆ», թալիսմաններ, հնայախոսություններ, աստղաբանություն, իբն Խալդուն

Использование заговоров и молитв из книги Ахмада аль-Бунни «Шамс аль-ма’ариф» в современных арабских обществах (на материале арабоязычного сегмента социальных сетей)

Антонян Анна И.

аспирант по профессии «Этнография», Институт Востоковедения, Российско-армянский университет (Ереван, РА)

Аннотация. Ахмад аль-Бунни аль-Малки (араб. أحمد البوني المالكي, ум. 1225) – средневековый исламский философ-суфий и математик. Помимо сугубо математических работ, он оставил сочинения по ильм аль-хуруф (араб. علم الحروف, эзотерический смысл букв), сихру (араб. سحر «магия») и ряда религиозных вопросов. Прежде всего, Ахмад аль-Бунни известен как автор одной из важнейших книг своей эпохи – «Шамс аль-Ма’ариф», считающейся одной из наиболее знаковых произведений о талисманах и гадании в арабском мире. Данная статья представляет собой попытку анализа «Шамс аль-Ма’ариф» по главам с фокусом на талисманах и заговорах, многие из которых до сих пор используются в повседневной жизни в арабских обществах, что находит отражение, в том числе, в социальных сетях. Примечательно также, народная традиция ошибочно приписывает Ахмаду аль-Бунни не принадлежащие автору тексты талисманов, что указывает на его авторитет как одной из ключевых фигур в исламской эзотерической литературе.

Ключевые слова и словосочетания: Ахмад аль-Бунни, «Шамс аль-Ма’ариф», талисманы, заговоры, астрология, Ибн Халдун

The Use of Spells and Prayers from the Book of Ahmad al-Buni “Shams al-Ma’arif” in Modern Arab Societies (Based on the Arabic segment of the Social Media)

Antonyan Anna I.

Postgraduate Studies on “Ethnography”, The Institute of Oriental Studies, Russian-Armenian University (Yerevan, RA)

Abstract. Ahmad al-Buni al-Malki (Arabic: أحمد البوني المالكي, d. 1225) was a medieval Islamic Sufi philosopher and mathematician. In addition to his mathematical works, he wrote on *ilm al-huruf* (Arabic: علم الحروف, the esoteric meaning of letters), *sihr* (Arabic: سحر “magic”), and a number of religious issues. Above all, Ahmad al-Buni is known as the author of one of the most important books of his era, “Shams al-Ma’arif”, considered as an iconic work on talismans and fortune telling in the Arab world.

This article is an attempt of the analysis of “Shams al-Ma’arif”, focusing on talismans and charms, many of which are still used in everyday life in Arab societies, the latter being also traced in social media. It is also noteworthy that popular tradition erroneously attributes talismanic texts to Ahmad al-Buni that do not belong to the author, which points to his authority as a key figure in Islamic esoteric literature.

Keywords & phrases: Ahmad al-Buni, Shams al-Ma’arif, talismans, charms, astrology, Ibn Khaldun

Նախաբան

Ահմադ ալ-Բունի ալ-Մալիքի (արաբ. أحمد البوني المالكي, մահ. 1225) իսլամական միջնադարյան սուֆի փիլիսոփա և մաթեմատիկոս է։ Ի

րումն մաթեմատիկական աշխատությունների, ալ-Բունին հեղինակ է հանդիսացել *իլմ ալ-հուրուֆի* (արաբ. علم الحروف «սառերի թաքնված իմաստների մասին գիտություն»), *սիհր* (արաբ.

سحر «կախարդություն») և մի շարք կրոնական հարցերի վերաբերյալ աշխատությունների: Նախ և առաջ, Ահմադ ալ-Բունին հայտնի է որպես իր դարաշրջանի ամենակարևոր գրքերից մեկի՝ «Շամս ալ-Մաարիֆ»-ի հեղինակ, որը համարվում է արաբական աշխարհում թալիսմանների և մոզուրյան մասին ամենանշանավոր աշխատություններից մեկը: Սույն հոդվածի նպատակն է վերլուծության ենթարկել «Շամս ալ-Մաարիֆ»-ի գլուխները՝ կենտրոնանալով դրանում առկա թալիսմանների և հմայախոսությունների վրա, որոնցից շատերը արաբական հասարակությունները դեռ օգտագործում են առօրյա կյանքում և անգամ շրջանառում են համացանցում: Հատկանշական է նաև, որ ժողովրդական ավանդույթը հեղինակին չպատկանող թալիսմանների տեքստերը սխալմամբ վերագրում է Ահմադ ալ-Բունինին, ինչը ցույց է տալիս նրա հեղինակությունը՝ որպես իսլամական էզոթերիկ գրականության առանցքային դեմքերից մեկը:

Ահմադ ալ-Բունինի կյանքն ու գործունեությունը

Ահմադ ալ-Բունին իսլամական աշխարհում հայտնի է որպես սուֆի¹, մոզուրյան մաթեմատիկական հիմքերի, տառերի և դրանց նշանակության վերաբերյալ աշխատությունների հեղինակ:

Ալ-Բունինի ծննդյան տարեթիվն անհայտ է: Ինչպես գրում է սիրիացի պատմաբան և գրականագետ Խեյրուդին ալ-Չիրիքլին իր “Al-‘a‘lām” («Ալանավոր անձինք») աշխատությունում՝ ալ-Բունին մահացել է հիջրայի 622 թ.-ին կամ մեր թվարկության 1225 թ.-ին: «Ճագումով ալժիրցի Աբու Աբբաս ալ-Բունին տառերի գիտությանն² (այսուհետ՝ տառագիտություն - Ա.Ա.) առնչվող աշխատությունների սուֆի հեղինակ է, իսկ Բունա մականունը կապված է Հյուսիսային Աֆրիկայի աիսամերձ շրջաններից մեկի հետ» [3, էջ 74]: Ալ-Բունինի գործունեության մասին հիշատակվում է նաև 19-րդ դարի փիլիսոփա Օմար Զահալայի աշխատություններում [6] և ժամանակակից հետազոտողներ Հ. Կիրոդլուի [9] և Ա. Զամիլի աշխատանքներում [5]: Նշված հետազոտողների աշխատություններում ալ-Բունին ներկայացվում է իսլամի օրենքները խստորեն պահպանող անձնավորություն, ով նախընտրում էր մեկուսանալ մարդկանցից, հաճախ էր ճանապարհորդում գիտելիքներ ձեռք բերելու նպատակով:

¹ Սուֆիզմը իսլամում հավատքի միատիկ պրակտիկա է, որտեղ մուսուլմանները ձգտում են գտնել աստվածային սերն ու ճշմարիտ գիտելիքն՝ Աստծո հետ անմիջական անձնական փորձի միջոցով: Ավելի մանրամասն տե՛ս [12]:

² Գիտություն (արաբերեն՝ ilm al-jabr), որն ուսումնասիրում է տառերը և դրանց նշանակությունը գրքայ իրադարձությունների համատեքստում [13]:

Պատմիչ Հաջի Խալիֆան իր “Kitāb sullam al-waṣūl ila ṭabaqāt al-fuḥūl” («Հոգրների դասերին հասնելու սանդուղք») գրքում նշում է, որ Շեյխ Թակի ալ-Դին Աբու ալ-Աբբաս Ահմադ իբն Ալի իբն Յուսուֆ ալ-Բուրայշի ալ-Բունին հեղինակ է մի շարք ստեղծագործությունների, որոնցից են՝ “Al-lum‘a al-nūrānīa” («Լույսի փայլը»), “Shams al-ma‘ārif al-kubra” («Մեծ գիտելիքների արևը»), “Shams al-ma‘ārif al-wuṣṭa” («Միջին գիտելիքների արևը»), “Shams al-ma‘ārif āl-suḡra” («Փոքր գիտելիքների արևը»)՝ **հմայախոսությունների վերաբերյալ**, “Laṭā‘if al-ishārāt” («Նշանների նրբություններ»)՝ **տառագիտության ոլորտում**, “Tashkīl al-‘anwār” («Լույսերի ձևավորումը»), “Sharaf al-atashkīlāt” («Կազմավորումների պատիվ»), “Mawāqif al-ḡāyāt” («Նպատակների դիրքավորումներ»)՝ **մաթեմատիկայի բնագավառում**, “Hadāya al-qāṣidīn” («Փնտրողների ուղեցույց»), “Muwaḍḍiḥ al-ṭarīq” («Ճանապարհ ցույց տվողը»)՝ **Ալլահի գեղեցիկ անունների վերաբերյալ** [4, էջ 84]:

Այնուամենայնիվ, որքան էլ կցկտուր թվան ալ-Բունինի՝ մեզ հասած կենսագրական տվյալները, ակնհայտ է, որ գործ ունենք իր ժամանակի ուսյալ մտածողներից մեկի հետ, որ կարողացել է իր աշխատություններում համապարփակ կերպով ներկայացնել իր ունեցած գիտելիքները տարբեր ոլորտներից՝ հանդիսանալով արաբական էզոթերիկ /գաղտնագիտական/ գրականության ռահվիրաներից:

“Shams al-ma‘ārif” աշխատության ընդհանուր բնութագիրը

“Shams al-ma‘ārif”-ը Ահմադ ալ-Բունինի՝ գաղտնագիտական ամենահայտնի ստեղծագործությունն է, որն իր մեջ ներառում է տեսական և կիրառական գիտելիքների սինթեզ՝ աստղագիտությունից, աստղաբանությունից, թվաբանությունից կրոնից: Այս սովորեցնում է, թե ինչպես պատրաստել թալիսմաններ և հմայիլներ, կազմել մոզական քառակուսիներ, Ղուրանի մի շարք այաթներ օգտագործել տարբեր նպատակներով:

Արաբական իրականության մեջ գիրքը գոյություն ունի երեք տարբերակով՝ “Shams al-ma‘ārif al-kubra” («Մեծ գիտելիքների արևը»), “Shams al-ma‘ārif al-wuṣṭa” («Միջին գիտելիքների արևը») և “Shams al-ma‘ārif āl-suḡra” («Փոքր գիտելիքների արևը»): Ըստ պրոֆեսոր Նուահ Գարդենների գոյություն ունի միայն մեկ միասնական միջնադարյան տեքստ, որը կարելի է անվանել “Shams al-ma‘ārif wa-laṭā‘if al-awārif”, իսկ “āl-suḡra” անունը վերաբերում է նույն աշխատության ավելի կարճ տեքստերի ժողովածուներին [8, էջ 102]:

Գոյություն ունեցող և շրջանառվող “Shams al-ma‘ārif”-ի [2] բոլոր տարբերակներով էլ աշխատությունը կազմված է քառասուն գլխից:

Այսպիսով, թալիսմանների պատրաստմանը նվիրված է 19-րդ՝ «Որոշ օգտակար հմայիլների և թալիսմանների հատկությունների մասին» գլուխը, որտեղ հեղինակը ոչ միայն ներկայացնում է թալիսմանների պատրաստման եղանակներ, այլև տալիս է արդեն պատրաստի թալիսմանների պատկերներ: Ալ-Բունիի աշխատությունում հանդիպում են աստղաբանությանը նվիրված առանձին գլուխներ, որոնցից է «Աշխատանքի բաժանումը, պարզեցումն ու կազմակերպումը՝ ըստ ժամանակի և ժամերի» վերնագիրը կրող (2-րդ գլուխ)-ը: Օրինակ, ըստ ալ-Բունիի. «Հինգաբթի օրվա ժամը վեցը լուսնինն է: Բարենպաստ է ցամաքային և ծովային ճանապարհորդությունների և ցանկացած բարի գործի համար» [2, էջ 22]. իսկ 3-րդ գլուխը՝ «Լուսնի քսանութ փուլերն՝ ըստ աստղաբանական կանոնների» նույնպես շոշափում է նախորդ գլխի թեման: Ալ-Բունին այս գլխում փորձում է կապ ստեղծել արաբական այբուբենի 28 տառերի միջև՝ լուսնի ամեն մի փուլը նվիրելով կոնկրետ տառի: Այսպիսով, փուլերից մեկը, որն անվանվում է սրտի փուլ հետևյալ կերպ է բացատրվում ալ-Բունիի կողմից. «*س* *տառի ոլորտն է, եթե լուսինը գտնվում է այստեղ, ապա նվազում է ոգեղենը...բարենպաստ է զենք և պատերազմական գործիքներ գնելու համար...*» [2, էջ 27]:

Աշխատությունը ենթարկվել է բազմաթիվ քննադատությունների, իսլամի՝ կախարդության նկատմամբ ունեցած վերաբերմունքով³ պայմանավորված՝ ալ-Բունին իր այս աշխատությամբ ենթարկվել է տարբեր քննադատությունների իր: Այսպիսով, իբն Խալդունը իր “*Muqaddima*” աշխատության 28-րդ գլխում, որը վերնագրված է «Կախարդության և թալիսմանների մասին» քննադատության է ենթարկում ալ-Բունիին: Իբն Խալդունը գրում է. «*Եվ քանի որ այս գիտությունները [կախարդությունը, հնայությունը, թալիսմանների պատրաստումը, աստղաբանությունը, տառագիտությունը – Ա.Ա.] օրենքից դուրս են՝ պայմանավորված այն վնասով, որ պարունակում են, և դրանք [գրքում զետեղված հնայախոսությունները և աղոթքները] չպետք է մեր մոլորակից ուղղվեն Աստծուն կամ ինչ-որ մեկին, նրա գրքերը կորել են [տարածում չեն գտել – Ա.Ա.] մարդկանց մեջ*» [1, էջ 252]:

Իր անձին ուղղված քննադատություններից ալ-Բունին անուղղակիորեն պատասխանում է իր “*Shams al-ma’arif al-kubra*” աշխատության առաջին գլխում՝ այնդեղով, որ իր վերոնշյալ գրքի գլուխների նպատակը «*Ամենակարող Ալլահի անունների ինսուլյունն է*» և այն ինսուլյունը, ինչ *Ամենակարող Տերը դրել է դրանց*

[*անունների – Ա.Ա.] ինսուլյունն օժիտում*]: Փորձելով իր գործունեությունը կապել բնագիտական և ճշգրիտ գիտությունների հետ՝ նույն տեղում ալ-Բունին գրում է. «*Ես այս գիրքը բաժանեցի գլուխների՝ յուրաքանչյուր գլխում ցույց տալով, թե ինչ են ընտրել և հաշվել ճշգրիտ գիտություններից, որոնց միջոցով կարելի է զգալ աստվածային ներկայությունն առանց դժվարության և կամ հոգնածության, ինչն իր հերթին կարող է հանգեցնել մարդու կողմից աշխարհիկ ցանկությունների իրականացմանը*» [2, էջ 6]: Այս եղանակով ալ-Բունին ապացուցում է, որ իր գործունեության անկյունաքարը Ալլահն է, դրանց ուսումնասիրությունը բնական գիտությունների տեսանկյունից՝ խուսափելով կրոնն ու գիտությունը հակադրող մշտական բանավեճից:

Չնայած ժամանակակիցների քննադատությանն ու իր միջավայրում իսլամի՝ հմայության նկատմամբ ունեցած դիրքորոշմանը՝ ալ-Բունին կարողացել է մեծ հետք թողնել իսլամական փիլիսոփայության մեջ, իսկ “*Shams al-ma’arif*”-ը շարունակում է մնալ արաբական գաղտնագիտության անգերազանցելի գոհարը:

Արաբալեզու համացանցում “Shams al-ma’arif” աշխատության որոշ աղոթքների, ծեսերի շրջանառումը սոցցանցերում

Որքան էլ կախարդությունը և մոգությունը համարվեն միջնադարյան մարդուն հատուկ աշխարհայացքային դրսևորում, այնուամենայնիվ, դրանք շարունակում են կիրառվել անգամ մեր օրերում: Թվային դարը չի հեռացնում մարդուն այդ պրակտիկաներից, այլև նպաստում է դրանց տարածմանը տարբեր նկարների, տեսանյութերի, կայքերի միջոցով: Այս առումով բացառություն չեն նաև համացանցի արաբալեզու տիրույթի օգտատերերն՝ անհայտի և էզոթերիկայի նկատմամբ իրենց հետաքրքրություններով:

Հոդվածի այս մասում փորձելու ենք դասակարգել մեր հետազոտությունների արդյունքում համացանցի արաբալեզու տիրույթից (tiktok.com, youtube.com, facebook.com) դուրս բերված հմայախոսությունների և թալիսմանների օրինակներ, որոնք մեջբերվել են Ահմադ ալ-Բունիի “*Shams al-ma’arif*” աշխատությունից: Այսպիսով, սույն թեմայով համացանցում շրջանառվող նյութերը կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ **նյութական (թալիսմաններ)** և **ոչ նյութական** (բանավոր կերպով կարդացվող հմայախոսություններ կամ աղոթքներ, որոնք ուղեկցվում են Ղուրանի այբոթերով): Հարկ է նշել, որ սրանց շարքերում հանդիպում են նաև աշխատանքներ, որոնք վերցրված չեն “*Shams al-ma’arif*”-ից, այլ պարզապես վերագրվում են ալ-Բունիին:


³ Իսլամում կախարդությունը մեղք է համարվում և խստորեն արգելվում է: Այդ մասին հիշատակվում է Ղուրանի *Sūra al-baqara*, *sūra al-’a’raf* և *sūra taha* սուրաներում:

1. Թալիսմաններ

Այս խմբին են պատկանում “Shams al-ma’arif”-ից համացանցի օգտատերերի կողմից տարբեր նպատակներով կիրառվող թալիսմանները: Օրինակ շրջանառվում է: Եկամուտ բերող վերտառությամբ մի թալիսման, որը վերցրված է “Shams al-ma’arif”-ից [2, էջ 256]: Տեսանյութի տակ հայտված մեկնաբանությունների մեծ մասը քննադատում են թալիսմաններին գերբնական ուժ վերագրելն ու մերժում մոգությունը:



Թալիսմանների մի մասը վերաբերում է անձնական կյանքին, մասնավորապես՝ սիրած անձնավորություն սեփական կյանք հրավիրելուն: Facebook սոցիալական կայքում [7] շրջանառվում է մի թալիսման՝ սիրո դմները բացող վերնագրով: Այստեղ օգտատերերի մեկնաբանությունները տարբերվում են. մի մասը քննադատում է և համարում «սատանայի ձեռքի գործ», մինչդեռ մնացածները խոսում են տվյալ թալիսմանի օգտակարության մասին: Իսկ թալիսմանն ունի այսպիսի տեսք՝



Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ այս թալիսմանը նույն ձևով չի հանդիպում “Shams al-ma’arif”-ում, սակայն թալիսմանի որոշ մասեր վերցրված են ալ-Բունիի աշխատությունից [2, էջ 266-267]: Իմ մեկնաբանությամբ նմանատիպ դեպքերն՝ այսինքն այլ մոգական գրություններ և կամ թալիսմաններ

ալ-Բունիին վերագրելը պատահական չէ: Իմանալով ալ-Բունիի հեղինակությունը և “Shams al-ma’arif”-ի նկատմամբ ունեցած հանրային մեծ հետաքրքրությունը, ինչպես նաև համացանցում շատ դիտումներ ձեռք բերելու հարցը, ֆեյսբուքյան օգտատիրոջը դրդել են նմանատիպ քայլի:

2. Հմայախոսություններ, աղոթքներ

Այս շարքին պատկանող հմայախոսությունները մեծ քանակով տարածված են Youtube-ում, որոնք հիմնականում տեսանյութերի տեսքով են և ուղեկցվում են տեսանյութերի հեղինակների մեկնաբանություններով: Ասվածի օրինակ կարող է ծառայել Այաթ ալ-Բուրսին՝ *ցանկալին ստանալու նպատակով ամենավտանգավոր գրքից* [10] “Shams al-ma’arif”-ից: Հեղինակը բառ առ բառ կարդում է աշխատության այդ գլուխը [2, էջ 248] և, ի զարմանս մեզ, ստանում է հիմնականում դրական մեկնաբանություններ: Կարծում ենք, օգտատերերը տեսնելով Ղուրանից Այաթ ալ-Բուրսի այսթի հիշատակումը որևէ անհանգստացնող հանգամանք չեն գտնում՝ անգամ չխորանալով վերնագրի երկրորդ մասի՝ *ամենավտանգավոր գրքից* “Shams al-ma’arif”-ից արտահայտության մեջ:

Youtube-ի հմայախոսություններից մեկն էլ՝ վերնագրված «”Shams al-ma’arif al-kubra” -ի օգուտը եկամտաբերության հարցում» [11] վերցրված է “Shams al-ma’arif”-ի 39-րդ գլխից, որը կոչվում է «Ալլահի գեղեցիկ անունների բացատրություն» [2, էջ 473]: Ալլահի 99 անուններից յուրաքանչյուրին ալ-Բունին հատկացնում է առանձին ենթագլուխ: Այդ անուններից մեկը al-Razaq-ն է, որն արաբերենից թարգմանաբար նշանակում է *սնող կամ պարզևող*:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ համացանցում տարածված են թե՛ իսկապես “Shams al-ma’arif”-ից վերցրված և թե՛ տվյալ աշխատությանը վերագրվող տարբեր հատվածներ: Հանրության արձագանքն էլ միանշանակ չէ և, չնայած նրան, որ արաբալեզու հանրության մի մասը հետաքրքրված է այս աշխատությամբ և կամ հավատում է դրա գերբնական ուժին, այնուամենայնիվ, մեծամասնությունը դեմ է արտահատվում նման տեսանյութերին՝ քննադատելով դրանք իսլամի տեսանկյունից:

Եզրակացություն

Ամփոփելով թեմայի վերաբերյալ շարադրված փաստերն ու մեր ուսումնասիրության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Ահմադ ալ-Բունին, ով թողել է փիլիսոփայական, մաթեմատիկական, լեզվաբանական բնույթի աշխատություններ, այնուամենայնիվ, ամենից շատ հայտնի է իբրև Էզոթերիկ և մոգական թեմաներով ստեղծագործած հեղինակ:

2. Ալ-Բունիի գլուխգործոցը «Շամս ալ-մաարիֆ» գիրքն է, որը հանդես է գալիս երեք տարբերակներով՝ մեծ, միջին և փոքր: Այս տարբերակներն առնչվում են ծավալին, մինչդեռ իմաստային առումով գոյություն ունի մեկ ամբողջական տեքստ:

3. «Շամս ալ-մաարիֆ»-ի քառասուն գլուխները թեմատիկ առումով առնչվում են աստղագիտությանն, աստղաբանությանը, մոգությանը, Ղուրանին, կրոնագիտությանն ու տառագիտությանը, որոնք գործնականորեն ներկայացնում են մոգության տարբեր տեսակներ և հանդիսանում են հմայախոսությունների մեծ շտեմարան:

4. Համացանցն ու թվային դարը չեն հակադրվում մոգությանը, այլ՝ նպաստում դրա տարածմանը: Որքան էլ իսլամը դատապարտում է մոգությունն, այնուամենայնիվ, համացանցի արարաբեզու շահառուները շարունակում են հետաքրքրություն ցուցաբերել թեմայի նկատմամբ:

5. Բովանդակային առումով «Շամս ալ-մաարիֆ»-ից վերցրված և համացանցում շրջանառվող նյութերը կարելի է համակարգել երկու խմբով՝ նյութական մոգություն, որոնք հիմնականում ներառում են թալիսմաններ և դրանց պատրաստման եղանակներ, և վերբալ /խոսքային/, որոնք իրենց արտահայտությունն են գտնում աղոթքներով և հմայախոսությունների կիրառմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ابن خلدون, □قدنة, المكتبة الشاملة 2019.
2. البوني أ., شمس المعارف ., بيروت 2006.
3. الزركلي خ., الأعلام, بيروت 2002.
4. حاجي خ., كتاب سلم الوصول إلى طبقات الفحول, تركيا 2010, ج. 1.

5. كامل أ., الكتاب الأكثر إثارة للجدل.. هل حقا كتب البوني "شمس المعارف الكبرى"؟
<https://shorturl.at/8JEAP>
6. كحالة ع., □عجم المـؤلفين
<https://shorturl.at/AjwIA>

7. **Facebook.com**
الشيخة الروحانية ام سلامة #الحبيب #فك السحر #رد الغائب #رد المطلقة توفيق الزواج والطاعة للزوجين وتسهيل الزواج للعزباء الشيخة الروحانية ام سلامة
<https://shorturl.at/5GCFi>

8. **Gardiner N.**, Forbidden Knowledge? Notes on the Production, Transmission, and Reception of the Major Works of Aḥmad al-Būnī, Journal of Arabic and Islamic Studies 12:81-143.

9. **Kıroğlu H., Ahmed B. Alî B. Yusuf El-Bûnî'nin**, Silku'z-Zevâhir Fi 'ilmi'l-Evâ'ili Ve'l-Evâhir Adlı Risâlenin Tahkik ve Tahlili, RumeliDE Dil ve Edebiyat Araştırmaları Dergisi (38), 1203-1221, Istanbul 2024.

10. **Youtube.com**
وصفات الشيخ الروحاني ودواء لكل داعٍ. آية الكرسي لنوال المراد وجميع الرغبات □من أخطر كتاب شمس المعارف الكبرى
<https://www.youtube.com/watch?v=VDEOe8CNy-g>

11. **Youtube.com** Ali Ali
https://youtu.be/PcscEZr_0GQ?si=mYWKSRIQqch393ll فائده جلب الرزق في شمس المعارف كبرى

12. Britannica առցանց բառարան՝
<https://www.britannica.com/topic/Sufism>

13. Էլեկտրոնային բառարան Al-m'ānī՝
<https://www.almaany.com/ar/dict/arar/%D8%A7%D9%84%D8%AC%D9%81%D8%B1/>

Сдана/Հանձնվել է՝ 27.01.2025
Рецензирована/Գրախոսվել է՝ 03.02.2025
Принята/Ընդունվել է՝ 10.02.2025